**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6**
**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-7/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան 23-ը հունվարի 2019թ.
ժամը 11⁰⁰

Մասնակցում էին՝
*Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝*
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պետի տեղակալ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Հ. Մելիքյան,
*գնահատողներ՝*
ՀՀ ՁՈՒ ԹՎ ՊԾ ՄՊ և ապահովման բաժնի պետ, փոխգնդապետ Ա. Մարգարյան
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության Պ, Դ և ԲՍ ապահովման բաժնի առաջատար մասնագետ, ՔՀԾ 2-րդ դասի առաջատար ծառայող Ս. Պետրոսյան,
ՀՀ ՁՈՒ ԹՎ ՊԾ ՄՊ և ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Վ. Ասատրյան:
*Քարտուղար՝*
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 2-րդ դասի խորհրդական Գ. Տերյան:

**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-7/1» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

(Գ. Տերյան)

1. Մասնակիցների՝ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝4, դեմ՝ 0:*

**1. Մասնակիցների՝ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.**

(Գ. Տերյան)

1.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-7/1» ծածկագրով ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ընթացակարգի շրջանակներում **առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների** կողմից որակավորումը հիմնավորող փաստաթղթերը առկա են և համապատասխանում են ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ «Աննա Դիանա» ՍՊԸ /կոնսորցիում «Ալիսա» ԱԿ/, Ա/Ձ Անահիտ Անտոնյան և «Արովյանի հացի գործարան» ՍՊԸ, որոնք որակավորումը հիմնավորող փաստաթղթեր ընդհանրապես չեն ներկայացրել և գնահատող հանձնաժողովի կողմից այդ մասնակիցների հայտերը մերժվեցին:

***ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2011թ.N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն, բացառությամբ «Աննա Դիանա» ՍՊԸ հետ կոնսորցիումով հանդես եկող «Ալիսա» ԱԿ, որի ժամկետանց հարկային պարտավորությունները կազմում են 61000 ՀՀ դրամ. 4-րդ չափաբաժնի մասով Ա/Ձ Հրահատ Օհանյանի հետ կոնսորցիումով հանդես եկող «Արատես Էներջի» ՍՊԸ և «Սարգսյաններ» ՍՊԸ, որոնց ժամկետանց հարկային պարտավորությունները կազմում են համապատասխանաբար 1763753 ՀՀ դրամ և 41239 ՀՀ դրամ, 5-րդ չափաբաժնի մասով «Սարգսյաններ» ՍՊԸ ժամկետանց հարկային պարտավորությունները կազմում են 41228 ՀՀ դրամ /չի գերազանցում մասնակցի առաջարկված գնի 1%-ը/ և «Սարգսյաններ» ՍՊԸ հետ կոնսորցիումով հանդես եկող «Տավինկո գինու-կոնյակի գործարան» ՍՊԸ ժամկետանց հարկային պարտավորությունները կազմում են 231 ՀՀ դրամ /չի գերազանցում մասնակցի առաջարկված գնի 1%-ը/, իսկ հրավերով նախատեսված «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող որակավորման պահանջներն առկա են: Ուստի վերոգրյալով պայմանավորված գնահատող հանձնաժողովի որոշմամբ «Աննա Դիանա» ՍՊԸ, Ա/Ձ Հրահատ Օհանյանի հայտերը մերժվեցին:***

Քանի որ Eauction համակարգը թույլ չի տալիս մասնակիցներին մերժել ժամկետանց հարկային պարտավորություններ ունենալու և որակավորումը հիմնավորող փաստաթղթերը ընդհանրապես չներկայացնելու հիմքերով, ուստի լիազոր մարմնի առաջարկի հիման վրա, որպես խնդրի միակ լուծում, գնահատող հանձնաժողովը **www.eauction.armeps.am** կայքում մերժման ենթակա մասնակիցների ներկայացրած որակավորման փաստաթղթերը գնահատել է անբավարար, որից հետո վերջիններիս համակարգի կողմից ավտոմատ նդանակով ծանուցում է ուղարկվել՝ անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ: Անհամապատասխանությունների շտկման համար Օրենքով նախատեսված մեկ աշխատանքային օրվանից հետո գնահատող հանձնաժողովը կրկին անգամ մերժման ենթակա մասնակիցների ներկայացրած որակավորման փաստաթղթերը գնահատել է անբավարար:

Քանի որ «Աննա Դիանա» ՍՊԸ /կոնսորցիում «Ալիսա» ԱԿ/, Ա/Ձ Անահիտ Անտոնյան, «Աբովյանի հացի գործարան» ՍՊԸ, Ա/Ձ Հրահատ Օհանյան /կոնսորցիում «Արատես Էներջի» ՍՊԸ և «Սարգսյաններ» ՍՊԸ/ հայտերը գնահատող հանձնաժողովի կողմից մերժվեցին, 3-րդ, 4-րդ, 8-րդ, 13-րդ և 14-րդ չափաբաժինների մասով ընթացակարգը հայտարարվեց չկայացած հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ (հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին:

1.2 31.01.2019թ. հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովի որոշեց «Էրիզ» ՍՊԸ /կոնսորցիում «Մագիա ՓԲԸ հետ/, «Սարգսյաններ» ՍՊԸ /կոնսորցիում Ա/Ձ Հրահատ Օհանյան և «Տավինկո» գինու կոնյակի գործարան. ՍՊԸ հետ/, «Հրանտ Կարապետյան» ՍՊԸ /կոնսորցիում «Գոհարիկ» ՍՊԸ հետ/ կողմից ներկայացված որակավորումը հիմնավորող փաստաթղթերը գնահատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-7/1» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան և վերջիններիս հայտարարել ընտրված (հաղթող) մասնակիցներ այն չափաբաժինում, որտեղ նրանք ճանաչվել են առաջին տեղ զբաղեցնող մասնակիցներ և անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագրեր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-7/1» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---

(Գ. Տերյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱՊ-ԷԱՃԾՁԲ-7/1» ծածկագրով ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրերի կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը $11^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

*Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:*

| | |
|---|---|
| **Գնահատող(ԳԱՊ)** | Հ. Մելիքյան |
| **Գնահատող** | Ա. Մարգարյան |
| **Գնահատող** | Ս. Պետրոսյան |
| **Գնահատող** | Վ. Ասատրյան |
| **Քարտուղար** | Գ. Տերյան |